ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հունիսի 2024 թվականի N 874-Ա

«ՄԱՐՏՈՒՆՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ԳՈՒՅՔ ՆԵՐԴՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև 2021 թվականի փետրվարի 18-ին ստորագրված «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում» թիվ 9202-ԱՄ համաձայնագիրը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Վարկային համաձայնագրի շրջանակներում ձեռք բերված և 100 տոկոս պետական մասնակցությամբ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Մարտունու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության օգտագործմանը հանձնված՝ պետական սեփականություն համարվող 462,650,000 դրամ արժեքով գույքը ներդնել «Մարտունու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում՝ համաձայն հավելվածի: Լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման միջոցով ավելացնել

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Մարտունու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը՝ լրացուցիչ թողարկելով և Հայաստանի Հանրապետության օգտին տեղաբաշխելով 46,265 հասարակ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 10,000 դրամ արժեքով:

2. Վարկային համաձայնագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Մարտունու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության նորակառույց մասնաշենքի կառուցման ավարտված աշխատանքների արժեքով՝ 2,653,330,000 դրամով, ավելացնել «Մարտունու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը՝ լրացուցիչ թողարկելով և Հայաստանի Հանրապետության օգտին տեղաբաշխելով 265,333 հասարակ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 10,000 դրամ արժեքով:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել «Գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան սույն որոշման 2-րդ կետով նախատեսված գույքի գնահատումը, ինչպես նաև սույն որոշման 1-ին և 2-րդ կետերով նախատեսված «Մարտունու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը, կանոնադրության մեջ համապատասխան փոփոխության կատարումը և օրենքով սահմանված կարգով գրանցումը՝ «Մարտունու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

14.06.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ